**ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

*Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0009, Կորյուն 15, հեռ. (37412) 77 77 40, info@cpcarmenia.am*

*Koryun Street 15, 0009, Yerevan, Republic of Armenia, tel. (37412) 77 77 40, info@cpcarmenia.am*

# ՈՐՈՇՈՒՄ N 2026/11

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿՏՀԲՄԾ-2026/7 ԵՎ ԿՏՀԲՄԾ-2026/8 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՍՏԱՑԱԾ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՂԹՈՂ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՄՅՈՒՍ ՏԵՂԵՐԸ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«24» մարտի 2026 թվական քաղաք Երևան

Աուդիտորական կազմակերպությունների ընտրության համար անցկացվող մրցույթների կազմակերպման և անցկացման մրցութային հանձնաժողովը, կազմով՝ Լուիզա Սարգսյանի, Տիգրան Ծատուրյանի և Ռուզաննա Առաքելյանի (այսուհետ՝ Մրցութային հանձնաժողով), ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 40.2-րդ հոդվածով, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի «Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը, նրանց ներկայացվող պահանջները և աուդիտի իրականացման շրջանակները սահմանելու մասին» Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի N 02-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) Հավելվածի 11-րդ, 62-րդ, 64-րդ, 67-րդ, 74-րդ, 75-րդ կետերով, ***որոշեց.***

1. ԿՏՀԲՄԾ-2026/7 ծածկագրով հրապարակային վիճակահանության փուլին մասնակցության իրավունք ստացած աուդիտորական կազմակերպություններից վերջնական հաղթող և հաջորդաբար մյուս տեղը զբաղեցրած մասնակիցներն (հաղթողներ) են՝

1) «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ,

2) «Թրասթ Աուդիտ» ՓԲԸ:

2. ԿՏՀԲՄԾ-2026/8 ծածկագրով հրապարակային վիճակահանության փուլին մասնակցության իրավունք ստացած աուդիտորական կազմակերպություններից վերջնական հաղթող և հաջորդաբար մյուս տեղը զբաղեցրած մասնակիցներն (հաղթողներ) են՝

1) «Թրասթ Աուդիտ» ՓԲԸ,

2) «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ:

3. ԿՏՀԲՄԾ-2026/7 և ԿՏՀԲՄԾ-2026/8 ծածկագրերով մրցույթների հրապարակային վիճակահանության փուլի արդյունքում վերջնական հաղթող ճանաչված աուդիտորական կազմակերպությունների տվյալները ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում վերջնական հաղթող ճանաչված աուդիտորական կազմակերպություններին աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագիր կնքել առաջարկելու նպատակով:

4. Սույն որոշումն ուղարկել մրցույթների հրապարակային վիճակահանության փուլին մասնակցած աուդիտորական կազմակերպությունների էլեկտրոնային փոստի հասցեներին:

**Մրցութային հանձնաժողովի նախագահ՝** **Լուիզա Սարգսյան**